



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հիւսիս Բ. Մ. Ստանբուլ

Թիի 5

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՍԻԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍԵ.

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1874



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՐԻԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1874

ՄԱՊՔԱՆՈՒՄ ԺՈՂՈՒՊ

ԲԱՑՈՒՄ 1874 Ա.Մ.Ի.Ն

Ն Ի Ս Տ Ե

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1874

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՏԱՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՅ

ՕՐԱԿԱՐԳ

1. ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ժողովոյն
2. Աղբաւնարայ Կաթոշիկոսական խնդիր

Ատենապետ պէյն ատեանը բացաւ ժամ 8
ին ի ներկայութեան 42 Երեսփոխանաց, որոց
թիւն ի վերջոյ 45 ի հասաւ: Ատենադպիր Էֆէն-
տիներէն ոչ մէկը ներկայ գտնուելով՝ Մէրէմ-
Պուլի Յարութիւն Էֆ. հրաւիրուեցաւ առօրեայ
Ատենադպրութեան պաշտօն վարել:

Ատենապետ պէյը, մի քանի երեսփոխանաց
այսօրեայ նիստէն բացակայ մնալուն պատճա-
ռը ծանուցանող նամակներ եկած լինիլը եւ
Տատեան Առաքել Սիտակ պէյէն երկրորդ ան-
գամ հրաժարագիր ղրկուիլը յայտնելէն ետեւ,
կը յաւելցնէ նաեւ զիւանին երկու տեղեկագիր
եկած ըլլալը, մին Վարչութեան կողմէն նո-
րնախի երեսփոխանաց համար, եւ միւսն՝ Կա-
թոլիկոսական կոնդակի խնդրոյն յանձնաժողո-
վոյ կողմէն: Եւ յետոյ կը գառնայ օրակարգին:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՒՊ

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Արքազան Նախագա-
հին հրամանաւ Ազգ. երեսփոխաններէն Ռու-

սինեան Էֆ. ներքին կանոնաց ծրագիր մը կը
չինէ, կը տպագրուի եւ ոչ պաշտօնական կեր-
պով կը հաղորդուի երեսփոխանաց: Արքազան
Նախագահն այս խնդրոյն ստիպողականութիւն
կուտայ եւ այսօրուան ժողովը հրաւիրելով ա-
ռաջին խնդիր կընէ գայն. զիւանն ալ արժան
կը դատէ այս խնդրոյն ստիպողականութեան
դրուիլն, եւ պարտ կը համարի Արքազան Պատ-
րիարք Զօր շնորհակալութիւն յայտնել իր այս
ազգասիրական ձեռնարկութեանը, եւ միանգա-
մայն Ռուսինեան Էֆէնտինին՝ իր օգտաւէտ աշ-
խատութեանը համար: Ռուսի քանի որ խնդի-
րը Արքազան Նախագահէն կուգայ ժողովին,
խօսքը նորին Արքազանութեանն է:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Թէեւ մեծամաս-
նութիւն չկայ տակաւին, բայց երեսփոխանու-
թեան ներկայութիւնն Ազգին օգտակար ընելու
համար խորհրդակցութեան սկսինք ներկայաց-
եալ ծրագրին վրայ. խորհրդակցութենէն միշտ

լոյս կը ծագի : Ինչպէս որ նաւ մը առանց զեկի չկրնար անմոլար ընթանալ , նոյնպէս 140 անձէ բաղկացեալ ժողով մը չկրնար առանց ներքին կանոնադրի ուղիղ ընթացք մը ունենալ . եւ ինքզինք պատկառելի ընել : Անհրաժեշտ պէտք մ'է այս , զոր շատոնց զգացած ըլլալով Երեսփոխանական ժողովն արդէն իր մէջէն յանձնաժողով մը ձեռօք ծրագիր մը խմբագրել տուած եւ անոր մինչեւ 124 յօդուածն ալ սրբաբարձ էր , առանց աւարտին կարենալ հասնելու : Օր մը ինչպէս գիտէք , Երեսփոխան էֆէնտիններէն մէկ մասը հրաւիրած էի ժողովոյն վիճակին վրայ առանձին խորհրդակցութիւն ընելու համար . այս խորհրդակցութեան մէջ խնդրեցի Ռուսիներն էֆ . էն որ Եւրոպոյ սահմանադրական ազգաց ատենական կանոններէն օրինակելով ծրագիր մը չինէ : Ենտրհակալ եւ յանձնարարութիւնս կատարեց եւ ծրագիր մը բերաւ , զոր այսօր ժողովոյդ հաւանութեան ենթարկել ուղեցի : Ար փափաքիմ որ ժողովն ընդունի զայն հետզհետէ փորձառութեամբ սրբագրելու պայմանաւ : Այսօր այս կարեւոր խնդիրը պէտք է լմնայ : Անկէ ետքը կուգայ Սահմանադրութեան վերաբնութեան խնդիրը , եւ յաջորդաբար Պիւտեճի եւ գաստիարակութեան կարեւորագոյն խնդիրները : Նոյն իսկ աչքատաց խնամարկութեան խնդիրն ալ կարեւորագոյն է . այս միջոցիս Հայաստանի մէկ մասը սովատանջ կը տառապի . պանդուխտ ազգայիններ ամեն օր գունդադուռը կը դիմեն գործ , ստակ եւ օգնութիւն խնդրելու : Ընդհանուր ժողովոյ նուիրական գործերէն մին է ասոնց վրայ խորհիլ եւ միջոցներ անօրինել , եւ եթէ կարող ըլլայ՝ աշխատութիւն եւ օգնութիւն հայթայթել այն բաղձաթիւ ազգայնոց , որոց խեղճութիւնը կարելի չէ լեզուաւ եւ գրչով նկարագրել , ոսկեղէն տառերով պիտի արձանագրուի իւր անունը պատմութեան մէջ : Ասոնցմէ զատ Աղթամարայ խնդիրն ալ կայ որ ստիպողական կերպարանք առած է : Այս շարթու հեռագիր մ'եկաւ որ կը ծանուցանէ թէ թեմականք յուսահատելով մաքանութիւնը վանքէն դուրս հաներ եւ վանքը գոցեր են իրենց կաթողիկոսը խնդրելով Այս գէպքը չէի կրնար Ընդհ . ժողովին շժանուցանել , վասն որոց այսօրուան դումարման հրաւիրագրին մէջ այն խնդիրն ալ յիշեցի : Արդ , կաղաչեմ որ ժողովը ներքին կանոնադրութենէն սկսելով անմիջապէս խորհրդածութեան ձեռնարկէ , մինչեւ որ մեծամասնութիւն գոյանայ եւ որոշում տրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ . — Դիւանն ալ կը ցանկայ ժամ առաջ կանոնադիր մը ունենալ , ուստի եւ Սրբադան Նախագահին կը ձայնակցի խնդրելու որ ժողովը թէ որ պատշաճ համարի քուէարկէ ներկայացեալ ծրագիրը , հետզհետէ փորձառութեամբ զայն կատարելագործելու պայմանաւ : Կանոնադրութիւնը միայն հարկաւոր է թէ Երեսփոխանաց եւ թէ դիւանին իրենց վարձունքը գիտնալու եւ ճշդելու համար . դիւանն ալ երբեմն կը շուարի թէ ինչպէս պէտք է վարել ժողովը . մանաւանդ որ ներքին կանոնադրութենէ զուրկ մնացած ժողով մը ընկանաբար անորոշ վիճակի մէջ գտնուած եւ հետեւաբար զինքը կառավարող դիւանը շարունակ պատածխանատուութեան տակ ինկած կըլլայ : Արեմն ներկայացեալ ծրագիրը պէտք է անմիջապէս մեր խորհրդածութեանը նիւթ ընեմք , եւ եթէ ընդունուի՝ այսօրու ընէ գործադրութեան առնումք , մեր ընթացքն այսուհետեւ կանոնաւորութեան մէջ մուծանելու համար :

ՄԱՁԱՄԵԱՆ Յ . ԷՖ . — Բաւական ժամանակ է ի վեր ներքին կանոն մ'ունենալու պէտքն զգալի եղած էր ժողովոյս . վերջերս այս պէտքն այնպիսի ստիպողականութիւն մ'առած էր որ եթէ ոչ անկարելի գէթ շատ դժուարին եղած էր ժողով գումարել առանց կանոնի : Աւստի Նախագահ Սրբադան մեծկակ ծառայութիւն մը ցրած եղաւ երբ զգալով այս անխուսափելի պէտքը՝ Ռուսիներն էֆ . էն խնդրեց որ ծրագիր մը խմբագրէ , եւ նա ալ հաճեցաւ իւր ձեռնհասութեամբ՝ մեր արդէն ունեցածներէն աւելի կատարեալ ծրագիր մը բերել : Ենտրհակալութիւնս կը յայտնեմ նախ Սրբադան Նախագահին եւ յետոյ Ռուսիներն էֆ . ին , եւ ի վերջոյ նաեւ Ընդհ . ժողովին՝ եթէ հաճի ընդունիլ զայս ծրագիր : Նախագահ Սրբադանն այս անգամ իւր հրաւիրագրով Ռուսիներն էֆ . ի ծրագրին հետ նաեւ Ընդհ . ժողովոյ կողմէ յանձնաժողովոյ մը ձեռօք պատրաստուած նախորդ ծրագրէն ալ մէյմէկ օրինակ հաղորդած էր մեզ : Ես յանձնաժողովոյ չորս անդամներէն ստորագրեալ ի 10 Օգոստոսի 1871 : Այս այն ծրագրին է որ ասկէ առաջ Ընդհ . ժողովս , երբ փափաքեցաւ ներքին կանոնադր մ'ունենալ , յանձնաժողովի մը ձեռօք խմբագրել տուաւ եւ քնն-

նութեանն ալ ձեռնարկելով մինչեւ 124 յօդուածը սրբագրեց . յորմէ ետքը ժամանակ չունեցաւ շարունակելու եւ երեսի վրայ մնաց այն անկատար վիճակի մէջ : Այս երկու ծրագրին իւրարու հետ բաղդատելով կը տեսնեմ որ Ռուսիներն էֆ . ի բերածն առաջին ծրագրին գրեթէ բովանդակութիւնն իւր մէջ ունենալով հանդերձ աւելի կատարելագործեալ է : Այս նորին մէջ քանի մը գլխաւոր կէտեր կան . մէկ մը ժողովին մեծամասնութեան խնդիրը , զոր խիստ բանաւոր կերպիւ լուծած է , եւ մէկ մ'ալ մայր դիւանէն զատ քանի մի դիւաններու կազմութիւնը , ժողովին գործոցն օգնելու համար . այս երկու գլխաւոր կէտերը շիտակն ամբողջ կանոնադրը կարծեն : Նախ մեծագոյն մասին չ'ողացան երկիւղը բոլորովին կը վերնայ , եւ ժողովը կազատի ատեն բանալու եւ որոշում տալու մասին մինչեւ ցարդ օրինաւոր թուոյն չ'ըլլու թեան պատճառած արգելքներէն : Ետ անգամ դիտած եմ , Յ կամ 10 քուէով որոշումներ կըլլան , անդին մեծ մաս մը անտարբեր կը մնայ , որ հարկաւ ներքին պատճառ մ'ունի : Ռուսիներն էֆ . ի ծրագրին այս անտեղութիւնը կը բառնայ որոշման համար շատ զիւրին եղանակ մ'առաջարկելով . վերջապէս խիստ բանաւոր կերպիւ լուծած է այս խնդիրն՝ որ ծրագրին հիմը կը համարուի : Երկրորդ գալով այն կէտին , որ Յ դիւանաց կազմութիւն կառավարի , Յ ական անդամներով , որք Ընդհ . ժողովին ներկայացեալ խնդիրներն ըստ տեսակին զատ զատ քննելով նախապատրաստելով եւ իրենց որոշումն ալ կցելով տեղեկագիր պիտի բերեն , այս ալ շատ պիտի դիւրացնէ Ընդհ . ժողովին գործը , զի փոխանակ ընդունայն վիճաբանութիւններով խնդիրները ճապարհելու եւ անոնց լուծումն երկարաձգելու , այդ անտեղութեանց առաջը կառուուի , նախաքննիչ դիւաններուն կողմէ եկած տեղեկագրերն ընդունելութեան գրուելով , որով եւ ժողովոյն որոշումները կը դիւրանան : Այս սղտիկ բաղդատութիւնն որ ըրի նախորդ եւ ներկայ ծրագրաց տարբերութեան վրայ Երեսփոխան էֆէնտիններուն յիշողութիւնն արթնցնելու համար է միայն , եւ ցոյց տալ ուղեցի այն կէտերն որ կանոնադրին հիմը կը կազմէին . մնացածները խօսք առնելու տալու եղանակներուն կը վերաբերին . եւ արդարեւ մեծ տարբերութիւն կայ հինին եւ նորոյն մէջ . նորը հինին թերութիւնները լրացնելով աւելի կատարելագործեալ

վիճակի մէջ կը բերէ , եւ Ընդհանուր ժողովին ներկայելի որ եւ է խնդրոյն լուծման եղանակը կը դիւրացնէ : Մինչեւ ցարդ Ընդհ . ժողովին շատ գիմողներ եղած են . ժողովուրդ , Թագաւորհրդական , Ազգ . պաշտօնեայ , եւայլն . սակայն եւ ոչ մէկուն գոհացուցիչ պատասխան տրուած չէ ցարդ . պատճառը ներքին կանոնի չգոյութիւնն ու գործոց ճապարղ ընթացքն եղած էր :

Այս կանոնադրին ընդունելով յատուկ խորհրդարանի մ'ալ պէտք պիտի ունենամք , եւ տեսնելով որ Սրբադան Նախագահն Ընդհ . ժողովին բարեկարգութեանը համար մեծ հոգ կը տանի , պէտք է քաջալերեմք եւ խնդրեմք որ խորհրդարան մը հաստատուելու համար ալ իւր ջանքը չխնայէ :

Երագիրը ցանկի խօսք մ'ալ կընէ . Պատրիարքի եւ Աարչութեան անդամոց ընտրութիւնները զեղջելի ցանկերու վրայ ըլլան ըսած է . այդ ցանկի խնդիրը՝ որ Սահմանադրութեան մէջ չկայ , կրնամք վերաբնութեան թողուլ , որ ատեն աւելի լաւ կը պարզուի . վասն զի զեղջելի ցանկ ըսելով պէտք չէ շփոթիւք . Ընդհ . ժողովը նախ այդ ցանկը պիտի քուէարկէ , որով ազատ է զայն ընդունելու եւ թէ մերժելու : Արջապէս կառավարի մ'իմ պաշտօնակցացս՝ այս փոքրիկ կէտերը զիտողութեան շատուլ ժամանակին թողով՝ ընդունիլ ներկայ ծրագրին իբրեւ միակ միջոց բարեկարգութեան Ընդհ . ժողովոյ . որ մեծ տարբերութիւն ունի հին ծրագրներէն , եւ որ շատ օգտակար պիտի ըլլայ ժողովին՝ մինչեւ ցարդ ունեցած տարտամ վիճակէն ազատելով եւ պատկառելի դիրքի մը մէջ գնելով զանի :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՁԱՆ . — Մաղլըմեան էֆ . ակնարկութիւն մ'ըրաւ ինձ խորհրդարանի նկատմամբ . ես ալ կը փափաքիմ որ առաջ այդ մեծ պէտքին լեցուելուն . զի եկեղեցւոյ սրբավայրը յարմար չէ Ընդհ . ժողովոյ ամեն նիստերուն . կան նիստեր , ինչպէս կաթողիկոսական ընտրութեան մասնակցութիւն , Պատրիարքի ընտրութիւն , որոց համար յարմարութիւն կայ եկեղեցւոյ մէջ գումարուելու . իսկ ուրիշ վիճաբանական խնդրոց համար եղած նիստերուն չ'յարմարիր , եթէ Ընդհ . ժողովը կամի պէտք է հրամայէ եւ չէ թէ խնդրէ ինձ խորհրդարանի մը շինութիւնը : Եթէ կուզէք այսօր իսկ հանգանակութիւն մը բռնամք այդ նպատակին համար :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այսօրուան խըն-
դիրը ժողովոյ ներքին կանոնադրութիւնն է .
ինչպէս Մաղլումեան էֆ. առաջարկեց , ընդու-
նիմք ներկայացեալ ծրագիրն , իր մէջ գտնուած
ինչ ինչ պզտի կէտերու մասին զիտողութիւնք
ժամանակին թողով : Ես ալ կերկրորդեմ այս
առաջարկութիւնը . իսկ խորհրդարանի շինու-
թիւնն այսօրուան խնդիր չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Դիւանն ալ կը կարծէ
որ խորհրդարանի շինութիւնն՝ որոյ կարեւո-
րութիւնը ամենուս յայտնի է , այսօրուան խըն-
դիր չէ . իսկ ժողովին ներքին բարեկարգութեա-
նը համար անհրաժեշտ է կանոն մը հաստատել :
Կը տեսնեմ որ ուրիշ խօսք ուզող չկայ ներկա-
յացեալ ծրագրին վրայ եւ ժողովը տրամադիր
կերեւի դայն ընդունելու . հետեւապէս խնդի-
րը քուէի դրուելու վիճակին հասած է , բայց
դեռ մեծամասնութիւն գոյացած չըլլալով ժո-
ղովը չկրնար քուէարկել :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՖ. — Իբրեւ երեսփոխան
պարտաւորութիւն կը համարիմ ինձ ձայնակցիլ
այն չնորհակալութեան զոր դիւանը եւ մասնա-
ւորապէս Մաղլումեան էֆ. յայտնեցին Սրբա-
զան Նախագահին եւ Ռուսիսեան էֆ.ի բերած
ծրագրին համար . այս ծրագիրն աւելի օգտա-
կար է քան զայն , զոր ասկէ առաջ Ընդհ. ժո-
ղովոյ կողմէ յատուկ Յանձնաժողով մը խմբագ-
րած ու բերած էր . ես ալ անգամ էի նոյն յանձ-
նաժողովին . բայց պէտք է խոստովանիլ թէ ա-
նի շատ թերի է , զի հապճեպով շինուած էր .
իսկ սա աւելի կատարեալ է : Նախագահ Սրբա-
զան ժողովին ներքին կանոնադրի հաստա-
տութեան ստիպողականութիւնն հասկցուց ,
ըսելով թէ՛ դաւառացի հայերը շատ թշուա-
ռութեան մէջ են եւ թէ՛ կանոնադրութիւնը
հաստատուելով անոնց ալ դարման պիտի ըլլայ :
Նորին Սրբազնութեան այդ յոյսը մարդասիրա-
կան զգացմանէ յառաջ կուգայ . մեք այդ յու-
սոյն ուրիշ նշանակութիւն չեմք կարող տալ .
կարծել թէ՛ կանոնադրութիւնն Ընդհ. ժողովոյ
զործոց յաջողութիւն պիտի տայ , ճշմարտու-
թեանէ հեռի է . կը ցաւիմ ըսել որ կանոնադրու-
թիւնը յոյս մ'է միայն : Կարծեմ Մաղլումեան էֆ.
էր որ աւելի յառաջ անցաւ եւ ըսաւ թէ Ընդհ.
ժողովը սոյն կանոնադրութիւնն ընդունելով
պատկանելի զիրք մը պիտի ստանայ : Ներում
պիտի խնդրեմ իմ մասնաւորութեանս վերաբեր-

եալ օրինակ մը տալու . ասի ինչի՞ կը նմանի ,
գիտէ՞ք . շատ գեղեցիկ դասադրքեր անպիտան
դասատուաց ձեռք անցնելով ապարդիւն եւ վնա-
սակար կը լինին : Ըսել կուզեմ որ մեք եթէ
համակամութիւն չունենամք եւ բարեկարգու-
թեան հետամուտ չը լինիմք , կանոններն ան-
բաւական են Ազգ. զործոց յաջողութիւնը ձեռք
բերելու . անոնք յոյս մ'են միայն եւ երազա-
կան թերեւս : Այսօր՝ որ վերջին անգամն է
գուցէ իմ ներկայութիւնս երեւի . ժողովոյ մէջ
վասն զի քիչ օրէն ճանապարհորդել պատրաստ-
ուած եմ , զիտաւորութիւն չունիմ ոչ զքե վըշ-
տացնելու , այսու ամենայնիւ վերջին անգամ
ս'ալ պարտքս պիտի կատարեմ յանուն օրինա-
ւորութեան իմ քննադատութիւններս ընելով :

Ասկէ առաջ շատ անգամ առիթ ունեցած
եմ յայտնել , այսօր ալ նոյնը պիտի կրկնեմ թէ
երբէք կանոնի պէտք չկայ հասկնալու համար
որ երեսփոխանութիւնը պարտաւոր է եղած ու-
րոշումները յարգել եւ գործադրել . ասկէ ա-
ռաջ որոշում եղած է որ խնդրոց կարգն ան-
բողջ ներկայութիւն եւ ժողովին մնայ առաջնու-
թիւն տալ իւր ուղած խնդրոյն . այս պահանջ-
մանս անձնական նկատման նշանակութիւն չը
տալու համար անցեալ անգամ քուէով որոշում
ուզեցի եւ եղաւ ալ : Կուզեմ դառնալ կանո-
նադրին վրայ խօսելու , բայց դեռ մեծագոյն
մաս չկայ ըսուեցաւ . խօսքս օրինաւորութեան
վրայ պիտի շարունակեմ . եթէ մեք օրինաւո-
րութիւնը յարգելու տրամադրութիւն ունե-
նամք , կանոն ալ չըլլայ , կրնամք ուղղութեամբ
գործել . իսկ եթէ չունիմք այդ տրամադրու-
թիւնը՞ , եւ ոչ մէկ կանոնադրութիւն չկրնար
գմեղ ուղղել :

Ուրիշ ապօրինութիւն մ'ալ պարտական
եմ յիշեցնել . միթէ՛ ընդարձակ կանոնադրի
պէտք կա՞յ հասկնալու համար թէ՛ ե՞րբ է սահ-
մանադրական պայմանաժամը , ե՞րբ կը դադրին
պաշտօնավարութիւնք : Դարձեալ կ'ըսեմ թէ
զիտաւորութիւն չունիմ ոչ զքե վշտացնելու ,
սակայն պարտքս է յիշեցնել զործուած ապօ-
րինութիւններն ապագային զգուշութեան հա-
մար : Ասկէ առաջ երբ սահմանադրական տա-
րեղութիւնը հասաւ , երեսփոխանք ոմանք առա-
ջարկեցին որ Քաղ. ժողովոյ շրջանը տարի մ'
ալ շարունակի , ըսելով թէ անոր անգամոց մէջ
անձնուէր անձինք կան . այն ատեն պատասխա-
նեցի թէ՛ ձեզի չափ ես ալ կը յարգեմ արժանի-
քըն ու անձնուիրութիւնը , բայց օրէնքն անձ-

նականութիւններէ աւելի պէտք է յարգելք
եւ չ'զոհեմք անձնական հանգամանաց : Ասոր
դէմ ըսուեցաւ թէ՛ բացորոշ տրամադրութիւն
մը չկայ այդ մասին Սահմանադրութեան մէջ ,
բայց միանգամայն որոշում ալ չեղաւ որ շա-
րունակեն , եւ դեռ կը շարունակեն : Ըստ իմ
կարծեաց պէտք էր Սրբազան Պատրիարքն ու
Քաղ. ժողովն այդ որոշումը պահանջէին , որ-
պէս զի օրինաւորութեամբ շարունակած ըլլա-
յին : Մեք պէտք չէ որ Սահմանադրութիւնը
խոստումներու մէջ միայն յարգենք , այլ մեր
կեանքին եւ գործերուն մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — (ԸՆԴ ԴՅԵԼԷՄԷ) . Ներե-
ցէք , Խիշկճեան էֆ. խնդրէն դուրս կեղնէք ,
խնդիրը ներքին կանոնադրութեան ծրագրին
վրայ է . եթէ Ընդհ. ժողովը ժամանակաւ ա-
պօրինաւոր վարուեր է , այժմ յիշել անտեղի է ,
Ասկէ ի զատ հիմնական սկզբունք մը կայ զոր
ամենքս ալ քաջ զիտեմք . այն է որ ժողով մը
որչափ որ քաղաքագէտ եւ բաբեմոյն անդամնե-
րէ բաղկացեալ ըլլայ , դարձեալ չը կրնար իր
վիճաբանութիւնքը եւ բարեկարգութիւնը ըստ
արժանոյն յարգարել եւ պահպանել առանց
կանոնի . ուստի դժուարաւ կը հասկցուին այն
խօսքերը թէ՛ «կանոն ալ չ'ըլլայ ուղղութեամբ
կրնամք գործել » :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — (ԸՆԴՆԱՆԿԵԼԷՄԷ) Թէոր
ուշադրութիւն ընէք , Անապետ պէյ , պիտի
տեսնէք թէ խնդրոյն շրջանին մէջ եմ եւ ո՛չ
դուրսը : Որովհետեւ ըսուեցաւ թէ ժողովը
պատկանելի զիրք մը ստանալու համար կանո-
նադրութեան պէտք ունի , ես ալ օրինակաւ
պիտի հաստատեմ թէ՛ քանի որ օրինաւորու-
թիւնը յարգելու տրամադիր չլինիմք , կանո-
նադրութիւնն օգուտ մը չունի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Մաղլումեան էֆ. ի ը-
սածն իրաւացի էր . մինչեւ ցարդ ժողովը ներ-
քին կանոն չունենալուն համար բարեկարգու-
թեան պէտք ունենալն ակնարկել ուզեց :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — Թէոր կուզէք կը լուծեմ .
քանի որ այդ կերպով ըմբռնէք , հոս վիճաբա-
նութիւն ընելն անկարելի կ'ըլլայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Բոլորովին խնդրէն
դուրս են այդ խօսքերը . կը հրաւիրեմ զձեզ
խնդրոյն մէջ մտնել :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — Դարձեալ ուրիշ կէտ
մ'ալ պէտք է յիշեցնեմ . միթէ՛ կանոնադրու-
թեան պէտք կա՞յ հասկնալու համար թէ՛ Վար-
չութեան ժողովներն՝ որ ընտրուած են Ընդհ.
ժողովէն՝ պատասխանատու են ընդհանուրին :
Կրօն. ժողովը բաւական ժամանակէ հետէ հրա-
ժարեցաւ . բայց դեռ իւր համարատուութեան
տեղեկագիրը չ'եկաւ Ընդհ. ժողովին . կարծեմ
ներքին կանոնի հարկ չկայ այս համարատուու-
թիւնն ուղեւի համար . թերեւս Կրօն. ժողովն
ազատ կը համարի զինքն ընդհանուրին պատաս-
խանատու ըլլալէ , ինչպէս ըսին սակէ առաջ :

S. ՄԱՏԹԷՆՈՍ ՎՐԴ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — (ԸՆԴ-
ԴՅԵԼԷՄԷ) Խօսք կուզեմ :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — Հիմա թէոր կուզէք ,
կանոնադրութեան խնդիրը բաւական կերպով
ըմբռնելով մէջը կը մտնեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Կը տեսնեմք որ ժո-
ղովին մտադրութիւն ու յօժարութիւնն այսօր
սա ներկայացեալ ծրագրին վրայ խօսուիլ է ,
ինչպէս խօսեցան ոմանք . երբ այս խնդրէն
դուրս կը խօսուի , իմ պարտքս է ժողովոյն
ինձ տուած արտօնութեանը համեմատ թոյլ չը
տալ թէ՛ եւ չեմ ուղեր եւ չեմ կրնար ալ ճնշում
բանեցնել , եւ ասոր համար կրկին եւ կրկին
խնդրեցի ձեզմէ՛ որ խօսից սահմանէն դուրս
չեղնէք : Հիմա քանի որ խնդրոյն մէջ մտնել
չէք ուզեր , ալ խօսք չեմ կրնար տալ ձեզ .
խօսքը S. Մատթէոս վարդապետին է :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — Խօսքս չը լմնցուցած ի-
րաւունք չունիք ուրիշին տալու . կը ցաւիմ որ
պաշտօնակիցներէս ոչ ոք իմ խօսքիս բռնաբա-
րութեանը դէմ բողոքեց եւ իմ իրաւունքս
պաշտպանեց : Ես կանոնադրին վրայ պիտի խօ-
սիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Խօսք չունիք քանի որ
խնդրէն կը շեղիք . բայց կրնաք բողոքել :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — Ես չեմ բողոքեր , քան-
զի գիտեմ որ բողոքը չ'արժեր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Այդ խօսքն ալ Կի-
ւանը չը կրնար ընդունիլ : Երբոր երեսփոխան
մը իր վիճաբանութեան ազատութիւնը ո՛ր եւ
իցէ ճնշման տակ ինկած ըլլալ կը կարծէ . բո-

զորքելու իրաւունք ունի, եւ այս իրաւունքն է միայն որ ես ձեզ յիշեցուցի:

ԻՖԻԿՏԵԱՆ Կ. ԷՅ. — Իփէկճեան էֆ. կանոնադրին վրայ խօսիլ ուղեց, կը խնդրեմ որ թոյլ տրուի խօսքը շարունակել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Ազատ է շարունակել թէ որ կանոնադրին վրայ պիտի խօսի:

ԻՖԻԿՏԵԱՆ ԷՅ. — (Շարունակելով). Ռուսիներէն էֆ. ի բերած ծրագիրը մանրամասն կերպով չպիտի քննեմ. իրօք օգտակար գործ մ'է այն, բայց այս ժողովին համար այնքան ուսումնական է որ անոր տրամադրութիւններն ի միտ առնելու համար մեզնէ քիչերը պիտի կարողանան զայն ուսումնասիրել: Քա՛ւ լիցի որ այս գիտողութեամբս Ռուսիներէն էֆ. ի արժանիքը ժխտել ուղեմ. ես զինքն իբրեւ ուսումնական միշտ կը յարգեմ, եւ իւր աշխատասիրութիւնն այս մասին արժէք ունի. միայն թէ անոր շատ մասերը կրնային կրճատուիլ եւ ամփոփուիլ. մանկուով անոր ինչ ինչ յօդուածոց մէջ գիտողութիւններ ունիմ, զորս համառօտիւ իւր առջեւը պիտի յայտնեմ:

ՅԾ Յօդուածին 4րդ պարբերութիւնը կ'ըսէ. « Հանրագիր թէ՛ աղբրագիր Նախագահ Սրբազանին պէտք է ուղղի եւ անոր տրվի կամ « պատրիարքարանի գիւանատան՝ մէկ կամ քանի մ'անձանց ձեռք »:

Միեւնոյն յօդուածին 5րդ պարբերութիւնը կ'ըսէ. « Ժողովարանին բակը խոնեալ բազմութեամբ բերուած աղբրագիրը ո'չ Նախագահը կրնայ լնդունել ո'չ Ատենապետը »: Իրաւացի է դուռած այս ետրի պարբերութիւնն առաջինին վրայ. սակայն կը մտածեմ թէ կրնայ պատահիլ որ Պատրիարքը (Ներսէս Սրբազանին համար չէ այս խօսքս) ժողովրդէն մատուցուած հանրագիրը ժողովին չ'բերէ եւ ժողովուրդն ալ յուսի ասոր դարման մը չէ ցուցուած. եթէ ժողովուրդը չվրդովի եւ չխոնուի, հապա ի՞նչ ընէ, ճամբայ մը ցուցնելու է:

Միեւնոյն յօդուածին վերջը կ'ըսէ. « Երեսփոխանի մը արգիլեալ է միջնորդ կանգնիլ բազմութեան եւ ժողովին մէջ տեղ »: Եթէ ասանկ պարբերութիւն մը յաւելցնել պէտք ըլլար, այն ատեն ես ալ պիտի առաջարկեմ յաւելցնել նաեւ թէ « Երեսփոխան մը իրաւունք չունի բազմութեան նախատական խօսք ընելու, եւ թէ ժողովն իրաւունք չունի իրեն եկած

հանրագրերը բարձի թողի ընելու »: Ժողովն իւր պատկառանքն փոխանակ կանոնադրութեան մէջ փնտոելու իւր գործոց մէջ պէտք է փնտոէ:

ԾԷ Յօդուածը կ'ըսէ. « Ժողովրդին ունկնդրութեան իրաւունքը լիովին վճարուած է աստեանագրութեանց հրատարակմամբ . . . ներսկայութեամբ սահմանեալ ունկնդրութեան « թոյլատուութիւնը շնորհ մըն է ժողովին կողմէն »:

Թէ ի՞նչ աստիճան սահմանադրական եմք մեք Հայերս Տաճկաստանի մէջ. աւասիկ կէտ մը՝ որ երկար բացատրութեանց կը կարօտի: Այս ժողովն երեսփոխանական է. քանի որ ժառանգական չէ, Հոռմէական ալ չէ, այլ ազգէն բղխեալ իշխանութիւն մ'է, ուստի շնորհ ըսելն աւելորդ է. ոմանք կ'ըսեն թէ Ազգն ամբողջ չկրնար զալ ունկնդրութեան, ուստի եւ իրաւունք չէ, այլ շնորհ մ'է: Թէ ո՞րչափ թիւր սկզբունք մ'է այս, օրինակաւ պիտի բացատրեմ. բայց կատակի մտօք չհասկնաք: Ի՞նչ միթէ Հայաստանի մէջ մաս մը հայեր թշուառութեան մէջ գանուելէն կը հետեւի՞ որ ամենքն ալ թշուառ ըլլամք. կամ թէ անոնց կորեկի հաց ուտելէն, հարկ կ'ըլլայ որ մեք ալ կորեկի հաց ուտեմք. ամբողջ ազգին ներկայ չը գանուելէն չհետեւի թէ ներկայացողներուն իրաւունքը չէ հոն գալ, եւ կ'ըսեմ թէ ժողովարանները ժողովրդին բաց պէտք է ըլլան. Եւրոպոյ մէջ հրապարակային ժողովներուն մեծ կարեւորութիւն տրուած է, եւ դատարաններուն մէջ մանաւանդ Ամերիկայ՝ քննութիւնները ժողովրդին ներկայութեանը կ'ըլլան. չեմ ուղեր հոս բացատրել թէ ինչո՞ւ համար կարեւոր է հրապարակային ըլլալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — (Շարունակելով) Այդ ըսածիդ մէջ սխալ մը կայ զոր հարկ կը համարիմ ուղղել: Գատարանն ուրիշ, ժողովարանն ուրիշ է. գատարաններն ամէն տեղ Եւրոպա բաց են, իսկ երեսփոխանական խորհրդարանները մասամբ գոց են ժողովրդին համար. Եւրոպայի մէջ ալ շնորհ մ'է նախագահին կողմէն ունկնդրաց ներկայութիւնը, եւ Ատենապետին ու Երեսփոխանաց ծանօթ մարդիկ եւ պաշտօնակալք, գեսպաններ եւ լրագրագետներ միայն ներս կառնուին, եւ անմիջապէս լրագիրք ժողովին վիճաբանութիւնն ու որոշումները համայն ազգին կ'իմացնեն. ասոր համար է որ օ-

րէնագիր ժողովներուն բարեկարգութիւնը չը վրդովելու համար, ինչպէս որ բազմամեայ փորձերով հաստատուած է, թող չեն տար որ խոռըն բազմութիւն մանէ առանց տոմսակի:

ԻՖԻԿՏԵԱՆ ԷՅ. — (Շարունակելով). Ներսէցէք, Ատենապետ էֆ. որ մինչ դուք իմ մէկ սխալս կուղղէք, ես ալ ձերն ուղղեմ: Ըսիք թէ դատաստանարանն ուրիշ է, խորհրդարանն ուրիշ. այո, ուրիշ են, բայց նպատակնին մէկ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — (Շարունակելով) Երեսփոխանական այսինքն օրէնագիր ժողով մը սկզբունքն ու դատարանի մը սկզբունքը շատ տարբեր են իրարմէ. հետեւաբար նպատակնին մէկ չկրնար ըլլալ: Աւելորդ կը համարիմ ասոր վրայ բացատրութիւններ տալ ժողովին արդէն գիտցած բաները չը կրկնելու համար:

ԻՖԻԿՏԵԱՆ ԷՅ. — (Շարունակելով) Պատմութեան մէջ որչափ ետ երթաք, ժողովարաններուն դաները գոյ պիտի գանէք ժողովրդին համար. իսկ որչափ առաջ երթաք, պիտի տեսնէք որ այդ գոց դաները պիտի բացուին միշտ: Ըսիք նաեւ թէ Երեսփոխանք ուզած մարդերնին կը հրաւիրեն եւ ներս կառնեն: Այդ ալ սխալ է. տոմսակները դրանն առջեւ կը բաժնուին, առաջին երթողները կառնեն եւ ներս կը մտնեն. իսկ ետքէն եկողին կը պատասխանեն թէ տոմսակ չմնաց. Երեսփոխանք ալ որոշեալ թրուով տոմսակներ կուռնենան իրենց բարեկամացը տալու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Այդ ըսածնիդ Թատրոններուն դաները կըլլայ ուր մինչ ի վերջ տոմսակ կը ծախեն կամ կուտան ուրիշներուն. իսկ Երեսփոխանական ժողովներուն համար ինչպէս որ արդէն ըսի, օր առաջ տոմսակներ կը բաժնուին: Բայց ձգեմք այդ խօսքերը. կանոնադրութեան վրայ ձեր խօսից թելը շարունակեցէք:

ԻՖԻԿՏԵԱՆ ԷՅ. — Կարծեմ որ եթէ Սահմանադրական եմք զուսիակ նիստի խօսքը պէտք չէ բերաննիս առնեմք: Ես սա կըսեմ որ այս տեղ շնորհ բան աւելորդ է:

Գարձեալ, ծրագրին ԾԱ յօդուածոյն 5 դ պարբերութիւնը կըսէ. « Քննիչ զիւանը կամ « մասնաժողովը ժողովին ատենը կը բերէ այն « աղբրագիրները՝ զորս Աւարչութեան յղել կեզ-

« բաղայէ, եւ զանոնք՝ որ օգտակար կը դասէ « ժողովին քննութեանն ենթարկել »: Ասկէ ալ կը հետեւի որ զիւանին իշխանութիւն մը կը տրուի՝ որ կրնայ ի չարն գործածել, այն բաներն ենթարկել ժողովին քննութեան՝ զոր ինք կ'ուղէ, եւ չենթարկել զանոնք, զոր ինք չուղէր: Այսպիսի զեղծումներու առաջն առնուլ պէտք է. հասարակաց բերանին մէջ կանոն եղած է ըսել որ դաներդ միշտ գոց պահէ եւ գրացիդ գոց մի բաներ:

Վերջին յօդուածը կըսէ. « Եթէ ատենապետ չըլլան մը մէջ երկու անգամ միայն՝ յաջորդապէս թէ ընդմիջապէս՝ նիստը բոլորութիւն անբաւական մնալով տեղի չուենայ կամ « վերնայ, սոսկ որոշող մասին բացակայութեան « երեսէն. եւ երրորդին՝ եթէ Երեսփոխանք « նախագահական յատուկ կոչնագրին խուլ մնան « ու նիստը դարձեալ անբաւական թողուն (Յօդ. « 52), բացակայ մեծամասնութիւնն իրրեւ եւ « ռապատիկ պարտազանց՝ ըստ կանոնի հրաժարեալ կը համարվի (Յօդ. 110) »: Այս տեղ ալ գիտնալ պէտք է թէ բացակայ մեծամասնութիւնն անհատապէս ոչք են. օրինակի համար այսօր ես ներկայ չէի եւ մեծամասնութիւն չեղաւ. վաղը միւսն, եւ դարձեալ մեծամասնութիւն չեղաւ. հետեւապէս հրաժարեալ համարուելին ո՞վ պիտի լինի:

Նոյնպէս անոր յետագայ պարբերութիւնը կըսէ. « Եթէ այդ անակնկալ այլ ոչ անկարելի « գէպը տեղի ունենայ, Նախագահ Սրբազանն « անհրաժեշտ հարկին մէջ կը գտնվի ստիպողապէս « կան ատենան բանալու որ եւէ թուով ներկայ « անգամոց, որք կը հաստատեն մեծամասնութեան բացակայութիւնը, կարտասանեն 110 « յօդուածին անօրինած արժանահաս վճիռը, եւ « զատենագրութիւնը կը ստորագրեն »: Այս տեղ ալ խնդիր կը ծագի առջեւս թէ Նախագահ Սրբազան զորոնք պիտի հրաւիրէ, քանի որ չգիտցուիր թէ բացակայ մեծամասնութիւնն անհատապէս որ երեսփոխաններէն կը բաղկանայ:

ՄԱՂԱՄԵԱՆ Յ. ԷՅ. — (Շարունակելով) Սորիշ տեղ բացատրուած են ատոնք:

ԻՖԻԿՏԵԱՆ ԷՅ. — (Շարունակելով) Գարձեալ վերջին յօդուածին վերջին պարբերութիւնը կըսէ. « Հետեւեալ որը ստիպողական ատենապետն « ին վճիռն հրատարակելով, միանգամայն եւ « բացակայից տոմսակները ժողովութեանց հրահանգ-

« ները տալով ընտրող ժողովոց, Պատրիարք
 « Սրբազանն իրրեւ աւանդապահ ազգային գոր-
 « ծաղիր իշխանութեան՝ անմիջապէս կը հոգայ
 « զԱզգային ժողովին ամբողջացումը » : Հոս ալ
 նոյնպէս յայտնի չէ թէ բացակայ հրատարակք
 հրոնք են, եւ որոց տեղ նոր ընտրութեան հը-
 րահանգ պիտի դրուի :

Ինչպէս պահ մ'առաջ ալ ըսի, երբէք տը-
 րամագիր չեմ ոչ մէկը վշտացնելու. երբոր ես
 տառական կերպով խօսելով խնդրէն կը շեղէի,
 դիւանն իմ խօսքս կտրել եւ ուրիշին տալ ու-
 զեց. սակայն անդին խօսք չառնելով խօսողներ
 եզան եւ զանոնք չը լռեցուց. դիւանին այսպի-
 օր վարմունքն ինձ դէմ չեմ ընդունիր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Երբ խնդրէն դուրս ե-
 լաք, ձեր խօսքն առի, եւ երբ խնդրոյն մէջ
 մտաք նորէն տուի. հիմա նորէն կ'սկսիք խըն-
 դրէն դուրս ելնել Գիւանին անձնականութեան
 դէմ խօսելով. եթէ անձնականութիւնները պի-
 տի շարունակէք, դարձեալ պիտի ըսեմ թէ խօսք
 չունիք :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — Իմ դիտաւորութեանս
 մէջ չկար անձնականութեան նկատում, բայց
 կը ցաւիմ, Ատենապետ պէյ, որ իմ խօսքերս
 անձնականութեան նկատմամբ կուզէք մեկնել :

(Աջմէջ ժողովն մէջ Լ. Մարտիրոսի մը
 « անէն ինչպէս Ատենապետ մը ժամանակէս
 ցեւը » :)

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Այդպէս կըսէք եւ անձ-
 նականութեան վրայ ու Գիւանին դէմ կը խօ-
 սէք : Գիւանը չկրնար թող տալ ձեզ որ անձ-
 նականութեան խնդիրներով ժողովը ժամաւա-
 ճառ ընէք : Կը խնդրեմ, Իփէկճեան էֆ. գործ-
 նական ճամբէն երթամք : Յայտնի է մեզ որ
 գիտութիւնն ու կրթութիւնը կը պահանջեն
 անձնական խնդիրներու երբէք տեղի չտալ.
 երբ կը տեսնեմ որ դուք ժողովին եւ Գիւանին
 դէմ կերպ կերպ նկատումներով խօսելէ չէք
 դադարի. պարտաւոր եմ ժողովին ինձ տուեալ
 իշխանութեան պայմանաւ վարուիլ ընդ ձեզ եւ
 չթողուլ որ շարունակէք :

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. — Այն, պիտի շարունա-
 կեմ կանոնադրութեան վրայ. սակայն ես ալ
 կը տեսնեմ, Ատենապետ Պէյ, որ դիտմամբ իմ

խօսքերս անձնականութեան կը տանիք, զ/ս
 լռեցնելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Խօսք չունիք, Իփէկ-
 ճեան էֆ. եւ կը պարտաւորիմ զձեզ ի կարգ
 կոչել յանուն ժողովոյն եւ Գիւանին եւ ար-
 ձանագրել տալ :

Իփէկճեան էֆ. — Նախագահ Սրբազանին
 աջն առնելով կը մեկնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — (Շարունակելով) Իբր յե-
 տին ծառայ ազգիս ես հոս իմ մասին եզած
 յարձակումները բանի տեղ չեմ դնել, որովհետեւ
 անձնականութիւնս բոլորովին զոհելու պարտա-
 ւոր եմ եւ ամենքնիս ալ անձնականութիւննիս
 չեմք մտածել. իսկ երբ դիւանին դէմ որոյ
 պատիւը ժողովոյն կը վերաբերի, որ ժողովին
 բղիսեալ է, նոյն իսկ դիւանին դէմ, կըսեմ
 յարձակումներ կը լլան, յայնժամ իրեն անհրա-
 ժեշտ պարտաւորութիւն է սոյն փոփոխակի
 պատիւն ու միանգամայն օրինաւորութիւնը
 պահպանելու համար իր իրաւացի իշխանու-
 թիւնը բանեցնելու : Շարունակ եւրոպոյ ժո-
 ղովներու վրայ կը խօսիմք եւ գիտնալ պէտք
 է որ նոյն ժողովներու մէջ երբ շփոթութիւն
 մը պատահի, մինչեւ անգամ ոստիկանութիւնը
 կը միջամտէ Նախագահութեան հրաւիրմանցը
 վրայ :

Այժմ խօսքն Մատթէոս Հայր Սուրբինն է :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Թոյլ
 տուք ինձ, Ատենապետ Պէյ, քանի մը խօս-
 քով պատասխանել Իփէկճեան էֆ. ի այն ակ-
 նարկութեան, զոր նախորդ կ'ըն. ժողովոյ հա-
 մարատութեանն առթիւ ի մէջ բերաւ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — (Ընդմիջելով) Խնդրէն
 դուրս էր այն, եւ դիւանն արդէն պէտք Կ-
 զած խորհրդածութիւնն ըրաւ, ուստի մի պա-
 տասխանէք :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. — (Շարունակելով) Սըր-
 բազան Նախագահն ու Ռուսինեան էֆ. կանո-
 նաց ծրագիր մը կը բերեն, որպէս զի ժողովն
 ըստ օրինի վարուի. չորս տարիէն ի վեր ամե-
 նուս բաղձայած բանն է այս. ես օգտակար կը
 դատիմ սոյն ծրագիրն եւ կառավարկեմ որ ամ-

բողջապէս ընդունուի եւ գործադրուի, թե-
 բութիւններն՝ եթէ ունի՞ հետզհետէ գործադ-
 րութեան մէջ լրացնելու պայմանաւ :

Գալով այն դիտաւորութեան՝ զոր Իփէկճեան էֆ.
 ծրագրին ՅՅ. դ յօդուածին վրայ յառաջ բերաւ
 ժողովը պահանջան հանրագրոց նկատմամբ, ըսելով
 թէ դարման չէ նշանակուած, ես կըսեմ թէ
 նշանակուած է, երբ այս օրէնքն ընդունի ժո-
 ղովը, պարտականութեան տակ դրած կը լլայ
 զՊատրիարքն մատուցեալ հանրագրերը ժողովին
 բերելու, եւ եթէ Պատրիարքը չբերէ, պա-
 տասխանատուութեան տակ կիյնայ անշուշտ :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ռուսինեան էֆ.
 ի ծրագրին վրայ ոչ ոք մերժողական իմաստով
 խօսեցաւ մինչեւ հիմայ, կերեւի թէ կատարեալ
 համամտութիւն կայ անոր թերութիւններն ա-
 պագային մէջ լրացնելու պայմանաւ. զանի ըն-
 դունելու եւ անմիջապէս գործադրութեան դը-
 նելու :

Նոյն իսկ Իփէկճեան էֆ. իւր քննադա-
 տութեամբքն հանդերձ այդ ծրագրին որմէքն
 ու կարեւորութիւնն հռչակեց. եւ եթէ իւր
 դիտաւորութիւնները կանխահաս էին եւ փոքր ինչ
 հեռուն կը ձգտէին, ճամբորդելու վրայ եղող
 երեսփոխան մը այդպէս միայն կրնար ընել, իւր
 պարտքը կատարելու համար :

Ես ի վաղուց կը փախաբիմ ժողովին գոր-
 ծօն շրջանի մը մէջ մտնելուն, եւ այս նպատա-
 կաւ կուզեմ որ ներկայացեալ ծրագիրն այժմէն
 ընդունուի, անոր ինչ ինչ տրամադրութեանց
 սրբագրութիւնը հետզհետէ կատարելու թէ ու-
 թեամբ : Բայց կէտ մը կայ եւ նկատողութեան
 արժանի կէտ մը, որոյ վրայ պէտք էր կանխաւ
 խօսուէր, ապագային անզգուշութեամբ չար
 օրինակ մը չտալու նախատեսութեամբ :

Ինչպէս արդէն ակնարկողներ եզան, ա-
 տենական կանոնաց ուրիշ ծրագիր մ'ալ կայ որ
 ժողովոյն ընտրեալ Յանձնաժողովոյ մը ձեռօք
 խմբագրուած եւ վիճարանութեան ենթարկուե-
 լով մէկ մասն արդէն ընդունուած է, Ես այդ
 նախորդ ծրագիրը պատրաստող Յանձնաժողո-
 վոյ անդամներէն մին լինելով կը յայտարարեմ
 որ նորը հինին հետ բաղդատութեան անգամ
 չկրնար մտնել, նորը հինէն անհամեմատ առա-
 ւելութիւններ ունի. հինը մեր նոյն օրուան վի-
 ճակին վրայ չափուած եւ հապճեպով ու աճա-
 պարանօք պատրաստուած համառօտ ծրագիր

մ'է, իսկ նորը՝ ձեռնհասութիւնը վկայեալ ան-
 ձի մը՝ խնդիրը կատարելապէս ուսումնասիրե-
 լով պատրաստած մէկ գործն է, որոյ արժէքը՝
 նոյն իսկ նախորդ Յանձնաժողովոյ անդամները
 կը ճանչեն եւ կը փափաքին որ առաջին ծրա-
 գիրն ետ թողուի եւ այս նորն ընդունուի : Մի-
 այն թէ պէտք է լաւ բացատրել եւ բացորոշ
 կերպիւ յառաջ դնել այն իրաւացի պատճառ-
 ներն, որոնցմով ետ կը թողուի այսօր աշխատու-
 թիւն մը, որոյ արժէքն ինչ ալ լինի, ժողո-
 վոյ յանձնարարութեամբ կատարուած եւ ըն-
 դունելութեան իսկ ենթարկուած է. զի մի
 գուցէ այսուհետեւ որ եւ է անձինք չկարենա-
 լով լինել իրենց աշխատութեան արդիւնաւոր
 լինելուն՝ վնասին եւ չուզեն աշխատիլ ժողո-
 վէն յանձնարարեալ գործոց համար :

Արդ՝ այսպէս պարզելէ ետեւ թէ ամեն
 ոք քաջ վերահասու լինելով նոր ծրագրին հը-
 նոյն վրայ ունեցած առաւելութեանց հինն ետ
 կը թողուի, կը դառնամ ժողովոյս հաւանու-
 թեան ենթարկեալ նոր ծրագրին, եւ նկատե-
 լով որ ժողովը՝ թէեւ զայն ընդունելու տրա-
 մագիր՝ մեծամասնութիւն չունենալուն համար
 չպիտի կրնայ այսօր բուէարկել. նիստը բոլո-
 րովին ապարդիւն չթողուլ զիտաւորութեամբ
 կառավարկեմ որ ներկայ երեսփոխաններէն ա-
 նոնք որ այս նոր ծրագրին հետզհետէ փորձա-
 դութեամբ սրբագրելու պայմանաւ կ'ուզեն ըն-
 դունիլ այժմէն, իրենց կամքը գրով հաղորդեն
 Գիւանին, յառաջիկայ նստին ներկայելու հա-
 մար, որպէս զի եթէ այն օրը բացակայ լինին,
 իրենց կարծիքն անձանօթ չմնայ ժողովոյն :

ՂԱԶՆՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Նախընթաց նիս-
 տին երբ եօթն բացակայ երեսփոխանաց հրա-
 ժարեալ համարուելու խնդիրը պիտի որոշուէր,
 առանձին փակման ժամը հասած ըլլալով խըն-
 դիրն անորոշ մնաց. եթէ նիստը քիչ մ'ալ շա-
 րունակուէր, անոնք ըստ օրինի հրատարեալ
 պիտի հրատարակուէին. արդ անոնց թիւը զեզ-
 ուելուն պէս մեծամասնութիւն կը գոյանայ :

Երեսփոխանք ոմանք Մէրեէմգուլի էֆ. ին
 առաջարկութիւնը կը կրկնեն :

Ժողովոյն հրաւիրմամբ Մէրեէմգուլի էֆ.
 գրով կը ներկայացնէ իւր առաջարկութիւնը,
 որ աւասիկ՝

« Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր կողմէ
 « Ազգային ժողովոյ հաւանութեան ենթարկեալ
 « կանոնադրութիւնը, որ 112 յօդուածէ կը բաղ-
 « կանայ, հետզհետէ փորձառարար սրբազրուե-
 « լու պայմանաւ ամբողջապէս կ'ընդունիմք եւ
 « այսօրուան նիստը մեծագոյն մաս չունենա-
 « լուն համար կը խնդրեմք զիւանէն որ մեր
 « այս հանրագիրը ժողովոյ յառաջիկայ նիստին
 « ներկայացնէ յիշեալ կանոնադրութեան ծրագ-
 « րին հետ » :

ՊԵՏԵՍՆ Թ. ԷՖ. — Արդէն կանոնադրու-
 թեան տեսարակին ճակատը գրուած է. Նախ-
 ք-ն Սբ-առ-նիս ի-շտէ ան-մի-տէ-ս խ-ղ-ւոյ հ-ա-
 ն-ման ենթ-դի-ւել, հե-ր-է-տէ-ք ք-ր-է-ք-ը-ն-է-ք-
 ք-ր-է-ք-ը-ն-է-ք-ը-ն-է-ք-ը-ն-է-ք-ը-ն-է-ք-ը-ն-է-ք-ը-
 Վէրեմ-գու-լի էֆ. ին
 առաջարկութիւնն ալ նոյնին վրայ հիմնեալ է.
 սակայն երեսփոխաններէն ոմանք սոյն ծրագ-
 րին մէկ քանի յօդուածները քննադատեցին,
 ոմանք ալ ելան ջատագովեցին. ըստ իս աւե-
 լորդ էր, քանի որ հե-ր-է-տէ-ք ք-ր-է-ք-ը-
 պայմանաւ կը ներկայանայ ժողովոյս վաւերաց-
 մանը : Ես միայն կ'սպասէի տեսնել թէ շօշա-
 փող պիտի ըլլա՞յ սա հիմնական կէտը, որուն
 վրայ պատկառելի ժողովոյդ ուշադրութիւնը
 պիտի հրաւիրեմ :

Գիտէք, Տեարք երեսփոխանք, թէ մեք
 արդէն Սահմանադրութիւն մ'ունիմք ազգովին
 ընդունուած եւ Տէրութենէն վաւերացած. մեր
 ազգին մէջ տիրող օրէնքն այն է. անոր հա-
 կառակ կանոն չեմք կրնար ընդունիլ, ինչ որ
 ալ ընդունիմք անոր համաձայն պէտք է ըլլայ
 Ներկայ ծրագրին մէջ, որոյ ստիպողական
 պէտքն ես ալ կը ճանչեմ. ինչ ինչ յօդուած-
 ներ կը պարունակեն, որք Ազգ. Սահմանադ-
 րութեան տրամադրութեանց ուղղապէս կը հա-
 կառակին. ուրեմն պէտք է նկատողութեան
 առնուլ եւ ծրագրին որ յօդուածն որ կը հակա-
 դակի Սահմանադրութեան, նախ անոր վերա-
 քննութիւնը կատարել Սահմանադրութեան մէջ.
 ինչպէս որ ասկէ առաջ Սահմանադրութեան ինչ
 ինչ տրամադրութիւնները վերաքննութեամբ
 սրբազրեցինք եւ գործադրեցինք. բայց ասոր
 համար հարկէ որ վերաքննութեան անհրաժեշտ
 եղած ձեւն ալ (ֆորմալիթէ) ի գործ դնենք, այն
 է՝ Բ. դրան վաւերացմանը զիմել. ասկէ առաջ
 այս կէտը զանց ըրինք, բայց անոր հետեւանքը
 յետոյ զգալով հարկ տեսանք վերջին պատրիար-

քական ընտրութեան ժամանակ Բ. դրան վա-
 ւերացմանը զիմել, որով միայն կարելի եղաւ
 նորընտիր Պատրիարքին՝ իւր սահմանադրական
 ուխտը ձեւաւոր կերպով եւ խղճի հանդարտու-
 թեամբ կատարել : Արդ՝ այժմ ներքին կանո-
 նադրութեան ծրագիր մը մեզ կը ներկայանայ,
 որ իր պատուականութեամբն հանդերձ այնպի-
 սի տրամադրութիւններ կը պարունակէ, որք
 Ազգ. Սահմանադրութեան կը հակառակին. Հարկ
 կ'ըլլայ մեզ գիտնալ թէ ասի ընդունելովիս
 Սահմանադրութեան մէկ քանի կէտերուն վե-
 րաքննութիւնն ալ ընդունած պիտի ըլլանք :
 Ակնարկած կէտերէս մէկ քանին յիշեմ. — Նախ՝
 Վարչութեան ժողովոց ընտրութեան համար
 զեղչելի ցանկ մը, այսինքն՝ փակեալ ցանկ կը
 տրամադրէ . . .

ՄԱՋԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդ-միջ-ւ-լ) . Ես
 արդէն շօշափեցի այդ կէտը, եւ ըսի որ նոյն
 իսկ կանոնադրին տրամադրութեամբ ժողովն
 ուղէ կ'ընդունի չուղէ կը մերժէ իրեն ներկա-
 յացեալ ցանկը :

ՊԵՏԵՍՆ Թ. ԷՖ. — (Ն-ր-ն-է-լ) Ուրեմն
 իմ ըսածս կը հաստատէք թէ Սահմանադրու-
 թեան հակառակ է : Ինչպէս ուրեմն կրնամք
 Սահմանադրութեան՝ որ տիրող օրէնքն է ազ-
 գին՝ հակառակ օրէնք հաստատել :

Ուրիշ կէտ մ'ալ կայ, տեարք, որ Սահ-
 մանադրութեան հիմնական սկզբանը կը հակա-
 դակի. այն է ժողովին մեծամասնութեան կէ-
 տը : Ծրագրին օրինական եւ իսկական մեծա-
 մասնութիւն կը տրամադրէ. օրինական մեծա-
 մասնութիւն ըսելով երեսփոխանաց ամբողջ
 թուոյն կէտէն մէկ աւելի կը հասկընայ, որ մեր
 երեսփոխանութեան համար 71 թիւն է. ասի
 Սահմանադրութեան համաձայն է. իսկ՝ իսկա-
 կան մեծամասնութիւն ըսելով երեսփոխանաց
 ամբողջ թուոյն երկու երրորդին կէտէն մէկ ա-
 ւելի կը հասկընայ, որ է 47. այս է որ Սահ-
 մանադրութեան համաձայն չէ : Ստոյգ է որ
 Սահմանադրութիւնն արտօնութիւն կուտայ
 ընդհանուր ժողով գումարելու երբ Պօլսոյ ե-
 րեսփոխանաց մեծագոյն մասին ընտրութիւնը
 կատարուած ըլլայ, առանց սպասելու գաւա-
 ռական Երեսփոխանաց ընտրութեան վախճանին՝
 որոց լուրը մէկ կողմէն կոստանդնուպոլիս հաս-
 նելու վրայ կըլլայ. եւ ասկէց ալ կը հետեւի

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ձայնակցիմ եւ-
 թիւճեան էֆ. ին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ներկայ ծրագրին
 արդէն իւր մէջ փոփոխութիւններ մտցնելու
 սկզբունքն ընդունած է. ուստի հարկ չկայ տա-
 րակուսելու թէ միանգամ ընդունուելէն ետե-
 կտ դառնալն անկարելի պիտի ըլլայ : Այս վըս-
 տանութեամբ կրնամք այժմ ընդունիլ սոյն
 ծրագիրը հետզհետէ սրբազրելու սլոյմանաւ :
 Ուրեմն աւելորդ է ժամաժամա լինիլ կը կըրկ-
 նեմ որ ժողովը մեծամասնութիւն ունի, 7 ե-
 րեսփոխան կայ հրաժարեալ, որոնց թիւը զեղ-
 չուելով մեծամասնութիւն կը գոյանայ :

ՄԱՋԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Ինչպէս որ արդէն
 ըսի, դարձեալ կը կրկնեմ թէ ներկայ ծրագրին
 այժմէն կրնամք ընդունիլ, եւ ինչպէս որ հե-
 ղինակն ու Սրբազան Նախագահը կատաճար-
 կեն, գործադրութեան մէջ հետզհետէ սրբազ-
 րել ու հարկ եղած փոփոխութիւններն ընդու-
 նիլ : Հետեւապէս Իրէկճեան, Եթիւճեան եւ
 Պէկեան էֆէնտիներն իրենց զիտողութիւնները
 կրնան ժամանակին ընել եւ պէտք եղած պա-
 տասխանն առնուլ : Մեր այժմ սա պէտք է զիտ-
 նամք թէ Սահմանադրութիւնն Ազգին անխախ-
 տելի օրէնքն է. երբ ներկայ ծրագրին գործադ-
 րութեան մէջ Սահմանադրութեան անհամաձայն
 յօդուած մը պատահի եւ տեսնեմք թէ Սահմա-
 նադրութեան տրամադրածէն աւելի աղէկ է,
 բնականաբար վերաքննութիւնն սկսուած կըլ-
 լայ, ու մէկը կընդունուի միւսը կը մերժուի :
 Ուստի երբէք չփոթելու կամ տարակուսելու
 տեղի չկայ, ամենքս ալ միեւնոյն նպատակին
 կը ծառայեմք առանց իրարու հակառակած լի-
 նելու : Պէկեան էֆ. ի կատարելու փարատելու
 համար կըսեմ թէ սխալ չէ. օրինական մեծա-
 մասնութիւնը Սահմանադրութեան 597 Յօդ-
 ուածին ցուցուցած 140 թուոյն մեծամասնու-
 թիւնն է. սակայն իսկական մեծամասնութիւն
 ըսուածը պէտք է փնտուել Սահմանադրութեան
 827 յօդուածին մէջ, որ կը տրամադրէ թէ
 «Ընդհ. ժողով կրնայ գումարուիլ, երբ Պօլսոյ
 «երեսփոխանաց մեծագոյն մասն ընտրուած ըլ-
 «լայ, առանց սպասելու գաւառական երեսփո-
 «խանաց ընտրութեան վախճանին՝ որոց լուրը
 «մէկ կողմէն Պօլիս հասնելու վրայ կըլլայ» :
 Ուստի այս աւելի զօրաւոր եւ աւելի օգտակար

ընտրեալ երեսփոխանաց՝ որ առ նուազն 71 ըլ-
 լալ պէտք է, թուոյն վրայ մեծամասնութիւն
 փնտուել : Ասի, ինչպէս ըսի, Սահմանադրու-
 թեան մէկ յօդուածին համաձայն է, սակայն
 իսկական անուանեալ երկու երրորդի մեծա-
 մասնութիւնը Սահմանադրութեան համաձայն չէ :
 Իսկ այս զիտողութեանց նպատակն ուրիշ
 բան չէ, բայց թէ ժողովը պէտք է զիտնայ որ
 տիրող օրէնք մը գտնուած ատեն անկարելի է
 անոր հակառակ օրէնք մ'ալ հաստատել, եւ
 թէ այս ծրագրին ընդունելուս հետ մէկտեղ
 պէտք է Սահմանադրութեան մէջէն այդ կէտե-
 րը վերաքննել : Կը յիշեմ թէ Ռուսիան էֆ.
 հրատարակութեամբ պատասխանելով ոմանց ա-
 ռարկութեանց, ըսաւ թէ Սահմանադրութեան
 մէջ սոսկ ատենական կանոններ կան, որ պէտք
 չէին անոր մէջ մուտ գտնել, եւ թէ ծրագրին
 պարունակութիւնը կրնայ աւելի ատոնց հակա-
 դակիլ : Թէ եւ ես կը կարծեմ թէ սոյն ծրա-
 գիրը Սահմանադրութեան հիմնական տրամադ-
 րութեանց ալ կը հակառակի, այսու ամենայ-
 նիւ եթէ Սահմանադրութեան մէջ սպորդեալ ա-
 տենական կանոնաց իսկ դէմ է, ըստ որում ա-
 տոնք տիրող օրինաց կարգ անցած են, պէտք
 է դարձեալ վերաքննութեամբ գործել, այսին-
 քըն արեւ-ն-է-լ-ն-է-լ : ըսուած զլուխը Սահմա-
 նադրութեանցն դուրս հանել :

Արդ՝ կեզրակացնեմ, եթէ ժողովը մտա-
 զիր է այս նոր ծրագրին ընդունիլ, պէտք է
 միանգամայն վերաքննել Սահմանադրութեան
 այն կէտերն՝ որոց կը հակառակի սոյն ատենա-
 կան կանոնաց ծրագիրը, եւ արդէն վերաքնն-
 նուած կէտերուն կարգն անցնել զանոնք : Հե-
 ր-է-տէ-ք ք-ր-է-ք-ը-ն-է-ք-ը-ն-է-ք-ը-ն-է-ք-ը-ն-է-ք-ը-
 ըսուածը չգորէր այն յօդուածոց համար ալ,
 որք հակառակ են Սահմանադրութեան, եւ ես
 չեմ կրնար քուէ տալ այդ մասին առանց յան-
 ցապարտ լինելու տիրող օրինաց առջեւ :

ԻԻԹԻՒՃ՝ԱՆ Կ. ԷՖ. — Իմ ալ ըսելիքս քա-
 նի մը կէտերու վրայ էր, որոց մասին բացատ-
 րութիւններ տրուեցան, եւ ես այդ բացատ-
 րութեանց կը սպասէի : Արդ քանի որ տրուած
 բացատրութեանց նայելով խօսք կը տրուի հե-
 տզհետէ սրբազրութեամբ գործադրել այն կէ-
 տերն՝ որք հետեւէն կամ մտէն Սահմանադրու-
 թեան կը հակառակին, կրնայ այս ծրագրին
 այժմէն ընդունուիլ բովանդակապէս :

է, վասն զի ընտրեալ երեսփոխանաց մեծամասնութեամբ ժողով գումարելու եւ որոշումներ ընելու արտոնութիւն կուտայ, եւ այս յօդուածին զօրութեամբ ժողովը կաշկանդուած չըլլար:

ՊԵԿԵԱՆ ԷՖ. — (Չընդհանուր կէրպէ). Ես չըսի թէ ասի գէշ է:

ՄԱԶԼՄԵԱՆ ԷՖ. — (չընդհանուր). Գալով Քրիստոստուր էֆ. ի առաջարկութեան, որ ըսաւ թէ ժողովը մեծամասնութիւն ունի թէ որ բացակայից թիւը զեղջուելու ըլլայ, կըսեմ թէ նախ այս կէտն ստուգուի, եւ թէ որ 5 անգամ յաջորդաբար բացակայ գտնուող երեսփոխանաց հրաժարումը պիտի ընդունուի, ասի որոշուելէն ետեւ կանոնադրութեան ծրարագիրը քուէի գրուի վերջանայ:

ՄԻՐԵՆԷՄ — ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Երբ լաւ թափանցեմք եղած խօսքերուն իմաստին, տարակոյս չ'մնար թէ ծրագիրն ընդունելու համար ամենքս ալ համամիտ եմք եւ միեւնոյն բանն ըսել կուզեմք, միայն բացատրութեան եւ տեսութեան ձեւերուն մէջ է տարբերութիւննիս: Ամենուս նպատակը հոն կեզրակայի թէ ներքին կանոն մը պէտք է ժողովին, որով կարենայ իւր գործոց ընթացքն ուղղել եւ արդիւնաւորել. ուստի ընդունիմք այս ծրագիրն, եւ միանգամ ընդունուելէն ու գործադրութեան ենթարկուելէն ետեւ կրնամք հետզհետէ հարկ եղած փոփոխութիւնները փորձառաբար կատարել, ընդունիլ կամ մերժել այն կէտերն որք զիտողութեան առարկայ լինին, Սահմանադրութեան անհամաձայն ըլլալու ենթադրութեամբ, Փորձառաբար ըսելէս մի գուցէ խրաչին ոմանք, ըսել չէ թէ անոր մէջ մի տրամադրութիւնն առանց քանի մ'անգամ գործադրելու ժողովը չպիտի կարենայ զիտողութեան ենթարկել եւ փոփոխել: Եւ երբ Սահմանադրութեան հակառակ կէտերու հանդիպիմք, տարակոյս չկայ թէ Սահմանադրութեան տրամադրութիւնն, մինչեւ որ վերաքննութեամբ փոփոխուի, իբր արող օրինաց տրամադրութիւն' նախապատուութիւն պիտի ունենայ կանոնադրին տրամադրութեանց վրայ:

Բացակայ երեսփոխանաց նկատմամբ նախընթաց նստին մէջ յուզուած հրաժարման

խնդրոյն գալով, ըստ որում ես դիւանին մը նայուն անդամներէն չեմ եւ ասորին պաշտօն մ'է զոր կը վարեմ այսօր, ինձ անկ չէ վճռական կարծիք մը յայտնել: Ես իբր Ատենադպիր ներկայ նստին' նախորդ նստի ատենադրութեանէն այդ խնդրոյ վերաբերեալ մասը կը կարգամ ժողովոյն իւր յիշողութիւնն արթնցնելու համար, եւ Ատենապետ Պէյին կը մնայ յիշեալ երեսփոխանաց հրաժարեալ հրատարակուելու վիճակին մէջ լինիլն ստուգել եւ կամ զայն ժողովոյ որոշման ենթարկել, որպէս զի ըստ այնմ հաշուեմք մեծամասնութիւնը:

Ատենադպիր Էֆէնտի կը կարգայ նախորդ նստի Ատենադրութեան մէջէն հրաժարականնին խնդրոյ տակ եւ անորոշ մնացած 7 բացակայ երեսփոխանաց վերաբերեալ մասը:

- Յիշեալ երեսփոխաններն էին .
- 1. Ասլանեան Ստեփան փաշա .
- 2. Սէրվիչէն Էֆէնտի
- 3. Զարգարեան Գէորգ »
- 4. Տօքթօր Իւթիւճեան »
- 5. Ճարտարապետ Սենեքերիմ »
- 6. Յարութիւնեան Նիկողոս »
- 7. Տօնէլեան Յակոբ »

Դիւանն ստուգելով Դիւանապետ էֆ. էն թէ յիշեալ 7 երեսփոխանաց այսօրուան նստին համար վերջին հրաւիրագիր զրկուած է հանդերձ օրինական ազգարարութեամբ եւ թէ յիշեալ երեսփոխանք ոչ անձամբ ներկայացած են եւ ոչ ալ պատասխանագիր զրկած. խնդրոյն վիճակը կը հաղորդէ ժողովոյն եւ անոր որոշման կ'ենթարկէ:

Ժողովը յիշեալ եօթն երեսփոխանաց երրորդ բացակայութիւնը լրացած կը համարի եւ զիրենք ըստ օրինի հրաժարեալ կը հրատարակէ:

Հետեւապէս դիւանը բացակայութեամբ հրաժարեալ երեսփոխանաց թիւը զեղջուելէ ետեւ ներկայից թիւը հաշուելով կը յայտարարէ թէ մեծամասնութիւն գոյացած է, եւ կը պատրաստուի կանոնադրութեան ծրագիրը քուէի դնելու:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Քուէարկութեան ձեւը բարեփոխութեան պէտք ունի: Եղած խօսքերէն հասկցուեցաւ թէ պիտի կրնամք համա-

ձայնիլ. ըսին թէ ծրագիրն մէջ եթէ կան այնպիսի կէտեր որ Սահմանադրութեան կը հակառակին, Սահմանադրութիւնն ըստ որում փրող օրէնք' նախապատուութիւն պիտի ունենայ ատենական հաստատեալ օրինաց առջեւ. իսկ երբ ծրագիրն Սահմանադրութեան հակառակող կէտերն օգտակար դատուին, այն ատեն Սահմանադրութեան այն կէտերը նախ պիտի վերաքննուին եւ յետոյ ատենական կանոնաց նոյն յօդուածները պիտի գործադրուին: Ես այս պայմանաւ կրնամ համաձայնիլ եւ ծրագիրն համար քուէ տալ:

ԱՍՅՆԵՐ. — Այո', այո', ընականաբար այնպէս պիտի ըլլայ:

ԱԼԱՃԱՃԱՆ Է. ԷՖ. — Ես ալ քուէ պիտի տամ ներկայ ծրագիրն ընդունելութեան համար Դիւանին կողմէ արտայայտեալ պայմանաւ. սակայն կառաջարկեմ որ ծրագիրն լեզուն ալ փոփոխուի, որ ամենուս հասկանալի ռճով գրուած չէ, եւ դիւանական ոճի վերածուելով անսովոր լեզուաւ կանոնագիր մը դուրս չեղնէ այս ժողովէն:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ներկայ ծրագիրն տրամադրութեան համեմատ կազմուելիք խմբագրական մասնաժողովին կրնայ յանձնուիլ, որգէս զի անոր լեզուն կարգադրէ:

ՄԻՐԵՆԷՄ — ԳՈՒԼԻ ԷՖ. — Լեզուի խնդիրն անտեղի է այժմ յուզել. հոս ոչ ակադէմիա է, ոչ ալ լեզուաբանական խնդիր կայ որոշելի: Մինչեւ որ այս կանոնադրութիւնը նոյն իսկ իւր տրամադրած խմբագրական դիւանին երթայ եւ անկէ վերադառնայ, յուսալի է որ Ռուսիան էֆ. կաջակցի Դիւանին մեր չհասկցած մասերը մեկնելու համար:

ԱԼԱՃԱՃԱՆ Է. ԷՖ. — Ո՛չ, չըլլար այդ:

ԱՍՅՆԱՊԵՏ ՊԵՅ. — Դիւանը նկատողութեան առաւ այդ խնդիրը, եւ պիտի յանձնէ խմբագրական մասնաժողովին, երբ սա կազմուի:

Դիւանը կը խմբագրէ քուէարկութեան ձեւը, եւ կը կարգայ զայն ի լուր ժողովոյն, որ անաւասիկ:

« Ամեն. Սրբաշան Պատրիարք Հօր' ժողո-

« վին հաւանութեան ենթարկած ներքին և « նոնադրութեան ամբողջութիւնը ժողովը կըն « դունի, անմիջապէս գործադրութեան գըր « ուելու եւ հետզհետէ բարեփոխելու պայմա « նաւ:

ԱԼԱՃԱՃԱՆ ԷՖ. — Ծրագրին գործածած բառն է այդ քուէարկութեան պէտք է հիմակուելէ ետ առնուի, չեմ կրնար ընդունիլ:

Այս միջոցին բաւական վէճ կը տարածուի ժողովին մէջ:

Ուրիշ ձայներ եւս Ալաճաճեան էֆ. ի առաջարկութիւնը կրկնելով, բարեփոխել բառին տեղ սրբագրել կամ վերաքննել բառը դնել կառաջարկեն:

Հետեւապէս քուէարկութեան միեւնոյն ձեւը, եւ քուէարկութիւնը կատարուելով, միաձայն հաւանութեամբ կընդունի ժողովը իւր կանոնադրութիւնը:

ՎԱԽԵՐԱՑՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՍԵԱԿԱՆ ՆՈՐՈՎ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

Դիւանը կը ներկայէ ժողովին երեսփոխանական նորոգ ընտրութեանց մասին վարչութեան Քաղ. ժողովէն եկած տեղեկագիրը, որոյ պատճէնն անաւասիկ:

Վսեմաշուք Ատենապետ Պէյ Ազգային Ընդհանուր Ժողովոյ:

Կարնոյ Գեր. Առաջնորդին և Գաւառական Ընդհ. Ժողովոյ դիւանին Օգոստոս 14 ի միաբանական գրութեանէն կը տեղեկանայ Ազգ. Վարչութեան Քաղաքական Ժողովս թէ նոյն վիճակին Գաւառական Ընդհ. Ժողովը հրաժարեալ երեսփոխան փանոսեան էֆ. ին տեղ նորոգ ընտրութիւնը կատարէր և երեսփոխան ընտրեր է. Կարնեցի Գէորգ էֆ. Մկրտիչեան.

Նոյնպէս Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ Արժ. Քարոզչին և Ընտրող. Ժողովոյն Յուլիս 31 ի միաբանական տեղեկա-

գերը կը յայտնէ թէ՛ Հինգերորդ վիճակաւ դադարեալ տասն երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութիւնը կատարուելով, 304 ընտրողներուն 101, ին մասնակցութեամբն առաջին անգամ քուէից բացարձակ առաւելութեամբ ընտրուած են :

- 1. Յակոբ պէյ Պալեան,
- 2. Աւետիս էֆ. Բօլօլեան,
- 3. Սարգիս ՝ Չրածեան,
- 4. Պետրոս ՝ Թեղալեան,
- 5. Յակոբ ՝ Արշակ
- 6. Նազարէթ ՝ Շահպաղ,

և երկրորդ անգամ 65 քուէարկուաց մասնակցութեամբ ընտրուած են .

- 7. Մկրտիչ էֆ. Բիւրքճիխանլեան,
- 8. Նշան ՝ Օտեան,
- 9. Յակոբ ՝ Բազաղեան,
- 10. Եղիազար ՝ Մէլիքեան,

Նաև Պէշիկթաշի հրաժարեալ մէկ երեսփոխանին տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով, 315, ընտրողներէն 92 ին մասնակցութեամբը երեսփոխան ընտրուած է.

Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան .

Պրուսայի հրաժարեալ երեսփոխանին տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով, երեսփոխան ընտրուած է նոյնպէս ,

Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան :

Սահմանադրութեան Գործադիր Յանձն

ԱՏԵՆԱՊԵՏ

Յ. Գ. ՏԱՏԵԱՆ

Նաժողովն օրինաւոր գտնելով վերոյիշեալ ընտրութիւնները, Բազաքական Ժողովս սոյն տեղեկագրով կը յանձնէ ի վաւերացումն Ազգային Ընդհ. Ժողովոյդ :

Ի Գիմաց Ազգ. Բազ. Ժողովոյ

Ատենագիր, վասն Ատենապետի,
Մ. Մամիկոնեան Սարգիս Արապեան

4 Հոկտեմբեմբեր 1874

Ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլիս :

Սոյն տեղեկագրոյն համաձայն Քրիստոստուր էֆ. թէ Պէշիքթաշի թաղէն եւ թէ Պրուսայէն միանգամայն ընտրուած ըլլալով, կը հարցուի իրեն թէ երկուքէն ո՞րը կուզէ ընդունիլ Քրիստոստուր էֆ. շնորհակալութիւն կը յայտնէ հաւասարապէս երկու ընտրութեանց համար, եւ Պրուսայի Ս. Առաջնորդէն ու Գաւառական Ժողովէն իրեն թախանձանօք նամակ գրուած ըլլալուն համար Պրուսայինն ընդունել կուզէ :

Ատենապետ պէյ քուէի կը դնէ ընտրութեանց տեղեկագիրը զոր ժողովն առանց դիտողութեան կընդունի եւ կը վաւերացնէ :

Ատենը գոցուելէն յառաջ զիւանին առաջարկութեամբ ժողովն որոշեց 15 օրէն յաջորդ նիստը գումարել, եւ նոր կանոնադրութեան համաձայն օրակարգ սահմանեց .

- 1. Մայր զիւանին անգամոց ամբողջացումը .
- 2. Նախաքննիչ զիւանաց կազմութիւնը .

Ատենը վերցաւ ժամը 10 ին :

ԱՏԵՆԱԳՊԻՐ

Յ. Հ. ՄԷՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ



APPENDIX

OF THE HISTORY OF THE

PROGRESS OF THE SCIENCE OF AGRICULTURE
IN GREAT BRITAIN

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ճախոշի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուշի
Եկեղեցեաց քանկաշները :